ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «25» նոյեմբերի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 41-Ա/Ք

**ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԶՈԼՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 12-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Տիգրանի Զոլյանին շնորհել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի ոսկե մեդալ՝ արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումների, օտարերկրյա պետությունների հետ համագործակցության զարգացմանը նպաստող գործունեության, բարեկամական կապերի ամրապնդման գործում ունեցած նշանակալի ծառայությունների և գիտական կադրերի պատրաստման համար:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ